

եկեղեցական գործերու. այնպէս որ դեսպաններ, մանաւանդ Ֆրանսացիները, կարծես թէ ուղղակի եկեղեցական գործակատարութեամբ օժտուած պաշտօնեաներ ըլլային:

Պոլսոյ Պատրիարքութեան պատմութեան մէջ այս երեւոյթը յատկապէս պէտք է շեշտել: Ասան զի դեսպանական ծանօթութիւններն ու յարաբերութիւնները թուրքիոյ Հայոց Պատրիարքարանին հետ, ի սկզբան որչափ ալ աղիտաբեր եղան ընդհանրապէս, այնչափ ալ ետքը՝ մասնաւորապէս՝ բարեկամական նկարագիր մ'առին եւ մերկանալով իրենց կրօնական հին սքեմը, ազգային կամ քաղաքական յարաբերութեան պայմաններով հաստատուեցան եւ կանոնաւորուեցան:

Այսօր ոչ 17^{րդ} դարու խնդիրներ կը յուզուին եկեղեցիներու մէջ, ոչ ալ դեսպաններ եկեղեցական գործակատարութենէ հաճոյք կը զգան՝ իրենց պարտքը լաւ կատարողներու գիտակցութեամբ:

Բայց իրաց վիճակը իր այսօրեանին հասցընելու համար Արլտի դարը ահագին տագնապներ պէտք է անցնէր՝ թումք եւ պատնէշ քաշելով այն բոլոր հոսանքներուն եւ խօլ վազքերուն դէմ, որոնց կը հանդիպէր:

Արլտի ոյժերն ու միջոցները բաւական յաջող էին եւ լաւ կշռուած: — Գպրոց մը պէտք էր՝ ազգին առաջնորդողներ պատրաստելու համար, Արլտ ունեցաւ այդ գպրոցը: Ազգը լուսաւորել պէտք էր՝ դարու ոգւոյն եւ պահանջներուն համեմատ եւ Արլտ այս մասին ալ ըրաւ ինչ որ կրնար ընել:

Արօնական կամ եկեղեցական, ըսնէք մանաւանդ «սեւապէլիան» խնդիրներով յուզուած Պոլիսը գոհացընել շատ դիւրին գործ մը չէր: Խնդիրը միմիայն քրիստոնեայ եկեղեցիներու, հայութեան կամ ֆռանկութեան վրայ չէր: